ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » մարտ 2025թ. No 1398 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/972-25 առ 03.03.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 6 դեղի գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մարտի «06 » - ի  N1398 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն  առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ֆերում Լեկ | երկաթ (III)-հիդրօքսիդի դեքստրանային համալիր | լուծույթ մ/մ ներարկման | 50մգ/մլ; (5) ամպուլներ 2մլ, (50) ամպուլներ 2մլ | Լեկ դ.դ, Վերովսկովա 57 փ., 1526 Լյուբլյանա | Սլովենիա | Լեկ դ.դ, Վերովսկովա 57 փ., 1526 Լյուբլյանա | Սլովենիա | Դ | 22759 28.02.2025 | 09.04.2025 |
| 2 | Ռինոստոպ-Օտիսիֆարմ | քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) | ցողաշիթ քթի | 0,5մգ/մլ; 15մլ պլաստիկե սրվակ | Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկի շրջան, Կուրսկ, Ագրեգատնայա 2րդ փ., 1ա/18 | Ռուսաստան | ՕՏՍՖարմ ԲԸ, Տեստովսկայա փ, II-րդ մասնաշենք, 12-րդ հարկ, տուն 10, 29 սենյակ, Մոսկվա 123112 | Ռուսաստան | ԱԴ | 22760 28.02.2025 | 16.05.2025 |
| 3 | Ռինոստոպ-Օտիսիֆարմ | քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) | ցողաշիթ քթի | 1մգ/մլ; 15մլ պլաստիկե սրվակ | Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ, 305022, Կուրսկի շրջան, Կուրսկ, Ագրեգատնայա 2րդ փ., 1ա/18 | Ռուսաստան | ՕՏՍՖարմ ԲԸ, Տեստովսկայա փ, II-րդ մասնաշենք, 12-րդ հարկ, տուն 10, 29 սենյակ, Մոսկվա 123112 | Ռուսաստան | ԱԴ | 22761 28.02.2025 | 16.05.2025 |
| 4 | Մօքսի-Տեք | մօքսիֆլօքսացին (մօքսիֆլօքսացինի հիդրոքլորիդ) | լուծույթ կաթիլաներարկման | 1,6մգ/մլ; 250մլ պլաստիկե փաթեթ | ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111 | Հայաստանի Հանրապետություն | ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 22762 28.02.2025 | 21.02.2025 |
| 5 | Օտիկային | ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) | ականջակաթիլներ | 40մգ/գ+10մգ/գ; 5գ պլաստիկե շշիկ, 15գ պլաստիկե շշիկ | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, 2204, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, շենք 19 | Հայաստանի Հանրապետություն | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, 2204, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, շենք 19 | Հայաստանի Հանրապետություն | ԱԴ | 22763 28.02.2025 | 30.10.2024 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | ԱՑՑ Լոնգ | ացետիլցիստեին | դեղահատեր դյուրալույծ | 600մգ; (10) պլաստիկե տարայում | Սալուտաս Ֆարմա ԳմբՀ, Օտտո-վօն-Գուրիկե-Ալե-1, 39179 Բարլեբեն-բաց թողնման հսկող, Հերմես Ֆարմա ԳմբՀ., Հանս Ուրմիլեր Ռինգ 52, 82515 Վոլֆրատսհաուսեն, Գերմանիա -բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Գերմանիա | Սանդոզ Ֆարմասյուտիկալս դ.դ, Վերովշկովա 57 փ., ՍԼ-1000 Լյուբլյանա | Սլովենիա | ԱԴ | 22764 28.02.2025 | 26.03.2025 |